

Գ. Խիստ օգտակար բան է տղոց երկու ձեռքն ալ գործածելու սորվեցընելը . վասն զի շատ բանի մէջ երկու ձեռքերնին իրարու տեղ կրնան գործածել իսկ թէ որ միայն աջ ձեռքը գործածելու ըլլայ տղան՝ ձախը կամաց կամաց անանկ կը տկարանայ, որ ատեն անցնելով՝ չկրնար ուղածին պէս բանեցընել :

Դ. Տղոց մարմինը ուժովցընելու համար խիստ օգտակար է զիրենք պաղ ջրով լուանալը : Հին ատեն բազմինք մտնելուն առողջարար յատկութիւնները տեսնելով, շատերը ամէն օր լուացուելու կ'երթային, թէպէտ և խիստ հարկաւոր գործք ալ ունենային : Տղաքը աղտոտ մնալով՝ շատ անգամ բորի պէս հիւանդութիւններ կ'ունենան . ուստի միշտ պէտք է պաղ ջրով լուանալ զիրենք :

Ե. Տղաք քանի որ երկու իրեք տարեկան են՝ քնանալու ու հանգչելու մեծ կարօտութիւն ունին . և քունը տեսակ մը հանգստութիւն ըլլալով՝ իրենց շատ հարկաւոր է . վասն զի անոնց ուժը կը պահէ ու կ'աւելցընէ : Բժիշկներուն ընդհանուր կարծիքն է որ տղաք ինչուան եօթը կամ ութը տարեկան ըլլան, երբոր քուններնին կը խէ՛ պէտք է թող տալ որ պառկին ինչուան 12 ժամ : Թէպէտ և բոլոր ան միջոցին մէջ չքնանան, բայց իրենց հարկաւոր եղած հանգստութիւնը կ'առնեն : Երբեք է որ լուսոյ դիմաց չպառկին, թէ չէ կարճատես կ'ըլլան :

Զ. Պէտք է տղոց ականջները երբեմն երբեմն արծաթէ կամ փղոսկրէ քչփորիկով մաքրել . բայց ոչ երբեք պղնձէ կամ երկրթէ քչփորիկ բանեցընել : Թաշկինակնին կտաւէ ըլլան, և ոչ երբեք բամպակէ . վասն զի բամպակը առողջութեան վնասակար է :

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Սիւնիք երէրագործութեան :

ԺԲ

Հերկելու Լրայ :

Հ. ԵՐԿՐԻՐ Հերկելու յարմար եղանակը և կերպը որն է .

Պ. Երբոր հողը սաստիկ թաց է՝ պէտք չէ հերկել : Ինչհանրապէս նայելու է որ խոր հերկուի, բայց երկրին բնութիւնն ալ դիտելու է : Շատ անգամ ինչուան բուսական հողին կարգը լմըննայ՝ կը հերկեն . անկէ աւելի առաջ երթալը աղէկ չէ : Լազոտ ու խճոտ հողերը քանի որ թաց են՝ կրնան հերկուիլ . վասն զի թէ որ տաք ու չոր ատեն հերկես, ունեցած խոնաւութիւննին ալ մէկէն կը կորսուցընեն :

Հ. Գետինը հերկելը ինչ օգուտ ունի .

Պ. Գետինը հերկելով՝ բուսոց սննդարար հիւթը կը շատնայ, հողն ալ պտղաբեր կ'ըլլայ . ասով օդէն ու արեւուն ճառագայթներէն կ'ուժովնայ, հողը կը կակըղնայ, բուսոց արմատներուն ալ դիւրաւ տարածուելու և սնունդ աւնելու տեղ կը բացուի . նմանապէս գէշ բոյսերն ալ կը խլուին : Աստի վարուցանի երկիրները պէտք է որ ստէպ ստէպ հերկուին, մանաւանդ կաչուն ու կաւոտ և կարծր հողերը . իսկ ան հողերն որ աւազոտ են ու կաչուն չեն, ստէպ հերկել հարկաւոր չէ :

Հ. Գետինը փորելուն աղէկ կերպը որն է .

Պ. Ինչեհէն աղէկը մարդու ձեռքէն՝ քի բահով եղածն է, տասնըհինկէն ինչուան 20 բթաչափ խորութեամբ, երկրին բնութեան յարմար : Լազի դիւրին է արօրով ու բահով եղածը . այսինքն նախ արօրը ութը կամ տասը բթաչափ լայնութեամբ ահօս մը

կը բանայ , ետքը կուգան մէկալ գործաւորներն ու բահով ահօսին հողը կ'առնեն՝ քովը կը դիրքեն : Արդու արոր ալ կրնայ բանեցուիլ . և թէ որ հողը խճոտ՝ քարոտ ու կաւոտ է , կըրնաս երկձիւղ բրիչ գործածել . ահօսին յատակի հողն ալ կակըղցընելու է , բայց նայելու է որ բուսական հողը վրայէն բոլորովին ելլելով՝ երկրորդ կարգի հողը չերենայ :

Հ . Արհիւրը երբ կամ ինչ տեսակ բոյսերուն համար քրքրելու է .

Պ . Ըն բոյսերուն համար՝ որոնց արմատը խոշոր է . աս գործողութիւն տակի հողը վրան կ'ելլէ , և մթնոլորտին հետ հաղորդակցութիւն կ'ունենայ , վրայի կարգին հետ ալ խառնուելով՝ պարարտութիւն կուտայ :

Հ . Խողանաթաղը ինչ բան է .

Պ . Խողանաթաղ կ'ըսուի ան գործողութիւնը , որով արտերը հնձելէն ետքը՝ թեթե կերպով մը երկիրը կը հերկեն , որպէս զի արտին մէջ մնացած խողանը , թափթրփած ցորենը և գէշ խոտերը թաղուին , ու նորէն բուսնին : Ըս գործողութիւնը գէշ խոտերուն ծաղկելէն առաջ պէտք է ընել , որպէս զի հունտերնին նորէն չծլին , հապա բոլորովին փտտին :

ԺԳ

Արհիւրաբերութեան մը գործածութիւնը րանիներուն վրայ :

Հ . ՎԵՏԻՆԸ հերկելու համար ինչ կենդանիներ կը գործածուին .

Պ . Ազ , կով , ձի , ջորի ու էշ . ձին ամենէն աւելի աղէկ կը յարմարի , բայց սովորաբար եզը կը գործածուի . վասն զի եզ պահելու քիչ ծախք պէտք է , և ամենէն անոր արմտիք կամ ալիւր չտրուիր : Ձին երկար ատեն աշխատելէն ետքը շատ բան մը չարժեր . իսկ եզը կրնայ ծանր գնով մսավաճառի ալ ծախուիլ՝ աղէկ մը գիրցուելէն ետեւ : Ազները ձիերէն քիչ ալ կը հիւրնդնան . և ընդհանրապէս գաւա-

ռի մը մէջ եզ որ գործածուի , հոն միւսը շատ առատ կ'ըլլայ ու կ'աժընայ : Բայց եզը ձիուն համեմատութեամբ աս պակասութիւններս ունի որ անոր չափ յարմար չէ աշխատանքի . վասն զի եզը դանդաղ է , թէպէտ և ձիէն աւելի կարգի կուգայ , և հերկելու ատեն նոյն գծէն շատ ջեղիր : Ինչ և իցէ կերպով՝ եզն ու ձին մէկտեղ լծելը աղէկ չէ :

Հ . Ընենէն աւելի հերկելու յարմար ձին ո՞րն է .

Պ . Ընիկայ որ ոսկորոտ է , կռակ կը կարճ ու շիտակ . սրունքն ալ կարճ , արագ , ու աշխատանքի դիմացող :

Հ . Հերկելու յարմար եզան յատկութիւններն որոնք են .

Պ . Վլուխը պզտիկ պիտի ըլլայ , վիզը բարակ , ուսերը լուծի յարմար , կռակ կը շիտակ ու մնտ , կուրծքը լեցուն , կողերը կամարածե , ազգերքը պզտիկ , սրունքն ալ շիտակ ու ամուր :

Նաւերը բաղնիքի տեսակ կիւանդութեան և պարտէլու հարս :

ԱՐԲԵՄՆ Ծառերը քաղցկեղի՝ պէս տեսակ մը հիւանդութիւն կ'ունենան , որով իրենց կեղևը կը սկսի այլայլիլ , ու կեղևին տակը մեծ վերք մը կը բացուի , և գէշ հիւթ մը կը վազէ մէջէն : Ձիները պարզ հնարք մը ունին որ կրակով թթենիին և ուրիշ ծառերուն այսպիսի հիւանդութիւնները մէկէն կը փարատեն . այսինքն տաքցուցած երկաթներով նոյն վերքը բոլոր կը տաղեն կ'այրեն , ինչպէս որ վիրաբուժներն ալ մարդկանց վրայ աս կերպս կը բանեցընեն :

Ըս հնարքս Վաղղիայի մէջ ալ Վամիլոս Պովէ անունով երեւելի մարդուն մէկը թթենիներուն վրայ փորձեր ու յաջողեր է :

1 Արհիւրէն :